

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N:708 հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ-ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

<p>1. Ընդհանուր դրույթներ</p>
<p>Պաշտոնի անվանումը, ծածկագիրը</p> <p>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության (այսուհետ՝ Բաժին) պետ, ծածկագիրը՝ 98-3.3-Ղ4-1</p> <p>1.2. Ենթակա և հաշվետու է</p> <p>Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին (այսուհետ՝ Մարզպետ)</p> <p>1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ</p> <p>Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:</p> <p>1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները</p> <p>Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:</p> <p>1.5. Աշխատավայրը</p> <p>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Գ.Նժդեհի 16</p>
<p>2. Պաշտոնի բնութագիրը</p> <p>2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</p> <p>1. Կազմակերպում է հողաշինության և հողօգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը:</p> <p>2. Իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում միջոցներ է ձեռնարկում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի /այսուհետ Մարզ/ տարածքում հողաշինության և հողօգտագործման ոլորտներում իրականացվող միջոցառումների կատարման ապահովման և համակարգման</p>

ուղղությամբ.

3. Կազմակերպում է հողաշինության և հողօգտագործման բնագավառներին առնչվող օրենսդրական և իրավական ակտերի նախապատրաստումը.

4. Կազմակերպում է մարզի տարածքում հողային ռեսուրսների կառավարման, հողօգտագործման արդյունավետության բարձրացման սկզբունքների մշակումը, հողային հարաբերությունների կարգավորման աշխատանքները.

5. Համակարգում է հողերի օգտագործման Ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող մարզային հանձնաժողովի գործունեությունը.

6. Համակարգում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման հանձնաժողովի գործունեությունը.

7. Մարզպետի կողմից սահմանված կարգով զանգվածային լրատվական միջոցներին տրամադրում է ոլորտի մասին անհրաժեշտ տեղեկատվություն, պարբերաբար հանդես է գալիս Բաժնի գործառույթների, առկա խնդիրների և դրանց լուծման գործընթացների լուսաբանմամբ.

Այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

Ստորագրում է Բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը.

Բաժնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

Գլխավոր քարտուղարին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ՝ Բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված, Գլխավոր քարտուղարի գիտությամբ, կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների.

Ըստ անհրաժեշտության, ներկայացնում է համապատասխան զեկուցումներ՝ համապատասխան մարմիններում իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից կատարվող աշխատանքների վիճակի մասին.

Կազմակերպում է Մարզպետին հասցեագրված, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններին հասցեագրված և Մարզպետարան վերահասցեագրված գրությունների, դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման և ուսումնասիրման աշխատանքների իրականացումը.

Մասնակցում և Կազմակերպում է Բաժնի մասնակցությունը Մարզպետարանի, ինչպես նաև համապատասխան մարմինների տարբեր ստորաբաժանումների հետ կազմակերպված՝ առաջադրված խնդիրների լուծման շուրջ աշխատանքային և մասնագիտական քննարկումներին.

Կազմակերպում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական

ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստման, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակման աշխատանքների իրականացումը.

Կազմակերպում է Բաժնի աշխատանքային ծրագրերի կազմման և ներկայացման աշխատանքները.

Իրավունքները՝

Մարզի հողօգտագործման հարցերին վերաբերվող հաշվետվությունների և տեղեկատվությունների կազմման և լիազոր մարմիններ ներկայացնելու համար դիմել համայնքների ղեկավարներին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու հարցով՝ մարզի համայնքներում վարձակալությամբ տրված գյուղատնտեսական նշանակության հողերի, մարզի համայնքներում քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի, քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանած գյուղատնտեսական նշանակության հողամասերից կամովին հողամասերի, մարզի համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի, մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային նշանակությունների փոփոխությունների արդյունքում իրականացված աշխատանքների, մարզի համայնքներում գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու, մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման գործառույթների, ֆիզիկական և իրավաբանական անձանց նախաձեռնությամբ իրենց սեփականությունը հանդիսացող հողամասերի նպատակային նշանակության փոփոխման պահին կադաստրային արժեքների առկա տարբերությունների համապատասխան համայնքների բյուջեներ մուտքագրված գումարների վերաբերյալ.

Դիմել մարզի համայնքների ղեկավարներին սահմանված կարգով և ժամկետներում համայնքների ամենամյա հողային հաշվեկշիռները կազմելու, դրանք համայնքի ավագանու և ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման հետ համաձայնեցնել և սահմանված ժամկետում մարզպետարան ներկայացնելու հարցով.

Իրավական և մասնագիտական հսկողության ամենամյա ծրագրի շրջանակներում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն իրականացնել՝ մարզի տարածքում հողաշինարարության, հողօգտագործման և հողի պահպանման նկատմամբ, միջոցներ ձեռնարկել ապօրինի հողօգտագործումը կանխելու, կասեցնելու և վերացնելու ուղղությամբ, հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ, համայնքների հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, բնակավայրերի գլխավոր հատակագծերի, գոտիավորման նախագծերի իրականացման նկատմամբ, համայնքների վարչական

սահմաններում պետական և համայնքային սեփականության հողամասերի տրամադրման, հետ վերցնելու, հողամասերի վարձավճարների և հողի հարկերի գանձման նկատմամբ, հաղորդումներ ներկայացնել Մարզպետին իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, մարզի տարածքում հանրապետական և տարածքային հողաշինարարական նախագծերի իրականացման նկատմամբ, մարզի վարչական տարածքում հողային ֆոնդի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ, մարզի սահմանանիշերի, գեոդեզական և այլ հատուկ տեղեկատվական նշանների և կետերի պահպանման նկատմամբ.

Համայնքների ղեկավաններից պահանջել և ստանալ վերահսկողության նպատակներին առնչվող փաստաթղթեր կամ դրանց պատճենները, տվյալներ, տեղեկություններ, տեղեկանքներ, բացատրություններ.

Մասնակցել հողերի օգտագործման սխեմաների, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (գլխավոր հատակագծեր, մանրամասն հատակագծման նախագծեր) կազմման սկզբունքների մշակմանը, տրամադրել եզրակացությաններ դրանց նախագծման առաջադրանքների և ավարտված սխեմաների (նախագծի) վերաբերյալ.

Ուսումնասիրել հաստատված գլխավոր հատակագիծ չունեցող մարզի համայնքների կողմից մարզպետարան ներկայացվել համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում հողամասերի նպատակային նշանակությունները փոփոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործերի համապատասխանությունը ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգով» սահմանված պահանջներին, անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում պահանջել և ստանալ լրաչուցիչ տեղեկություններ:

Ուսումնասիրել մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ նախկինում համայնքների վարչական սահմաններից դուրս, մարզերի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման նպատակով կազմված է և մարզպետարան ներկայացված հողաշինարարական գործերի համապատասխանությունը ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին, անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում պահանջել և ստանալ լրաչուցիչ տեղեկություններ, կազմել համապատասխան եզրակացություններ:

Ուսումնասիրել մարզպետարան ներկայացված գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու վերաբերյալ մարզի համայնքներից ստացված նյութերի համապատասխանությունը ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգի» պահանջներին, անհամապատասխանություն հայտնաբերելու

դեպքում պահանջել և ստանալ լրաչուցիչ տեղեկություններ, կազմել համապատասխան եզրակացություններ:

Մասնակցել հողօգտագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված նպատակային ծրագրերի, հողերի միավորման և բաժանման նախագծերի, ոլորտի նորմատիվ իրավական ակտերի մշակման աշխատանքներին, նախագծերի վերաբերյալ ներկայացնել համապատասխան եզրակացություններ և կարծիքներ.

Մասնակցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի մասնավորեցման և հետագա օգտագործման ուղղությունների, հողերի պահպանության, միավորման և վերաբաշխման նպատակային ծրագրերի մշակման աշխատանքներին, ՏԻՄ-երի մասնակցությամբ կազմակերպել քննարկումներ և նախագծերի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ և եզրակացություններ:

Հանրապետական և տարածքային ծրագրերին համապատասխան մասնակցել խախտված հողերի ռեկուլտիվացիայի, հողաշերտերը ջրային և հողմային հողատարումից, փլուզումներից և սողանքներից, ջրածածկումից, ճահճացումից, չորացումից, աղակալումից, արտադրական թափոնների, ռադիոակտիվ և քիմիական ախտահարումից պաշտպանելու, գյուղատնտեսական հողերը բարելավելու, նոր հողեր յուրացնելու, հողը պահպանելու և դրա բերրիությունը բարձրացնելու նպատակային ծրագրի մշակմանը և իրականացմանը, ՏԻՄ-երի մասնակցությամբ կազմակերպել քննարկումներ և նախագծերի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ և եզրակացություններ:

Հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման խախտումներ հայտնաբերելու դեպքում հանձնարարել բաժնի աշխատակիցներին տեղում ուսումնասիրություններ կատարելու և համապատասխան տեղեկատվություն ներկայացնելու համար:

Ուսումնասիրել Մարզպետարան ստացված հողային հարաբերություններին վերաբերվող քաղաքացիների և իրավաբանական անձանց դիմումները, ըստ անհրաժեշտության իրականացնել տեսչական ստուգումներ:

Պարտականությունները՝

Ուսումնասիրել և ամփոփել մարզի համայնքներից ստացված հողօգտագործման բնագավառին վերաբերվող տեղեկատվությունները, սահմանված ձևաչափերին համապատասխան կազմել համապատասխան հաշվետվություններ (տեղեկատվություններ) և սահմանված ժամկետում ներկայացնել լիազոր մարմիններ.

Ամփոփել մարզի համայնքներից ստացված ամենամյա հողային հաշվեկշիռները, կազմել մարզի հողային հաշվեկշիռը այն համաձայնեցնել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ և սահմանված ժամկետում ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե.

Հողօգտագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների

գործունեության նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացման ծրագրի շրջանակներում, գործառույթը համակարգող ստորաբաժանում ներկայացնել բաժնի մասնագետների թեկնածությունները մարզպետի որոշմամբ համապատասխան աշխատանքային խմբերում ընդգրկվելու համար:

Աշխատանքային խմբի կազմում ապահովել հողօգտագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ վերհսկողության իրականացումը լիազոր մարմնի կողմից տրամադրված հարցաշարին համապատասխան: Արձանագրել հողօգտագործման ոլորտում հայտնաբերված թերությունները (խախտումները) և առաջարկություններ ներկայացնել դրանց վերացման ուղղությամբ:

Ապահովել բաժնի մասնագետների մասնակցությունը հողերի օգտագործման սխեմաների, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (գլխավոր հատակագծեր, մանրամասն հատակագծման նախագծեր) կազմման սկզբունքների մշակմանը, արդյունքներն ամփոփել և կազմել համապատասխան եզրակացություններ՝ նախագծման առաջադրանքների և ավարտված սխեմաների (նախագծի) վերաբերյալ.

Ապահովել բաժնի մասնագետների մասնակցությունը՝ հաստատված գլխավոր հատակագիծ չունեցող մարզի համայնքների կողմից մարզպետարան ներկայացվող համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում հողամասերի նպատակային նշանակությունները փոփոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործերի ուսումնասիրության, լրամշակումների կատարման, անհրաժեշտության դեպքում տեղանքի տեղազննության և համապատասխան եզրակացությունների կազմման աշխատանքներին:

Կազմակերպել Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող Շիրակի մարզային հանձնաժողովի գործունեությունը (հանձնաժողովի անդամներին հողաշինարարական գործերի նախնական ծանոթացում, հանձնաժողովի նիստի օրակարգի նախագծի կազմում, հանձնաժողովի անդամներին հրավիրվող նիստերին մասնակցության ապահովում, քննարկման արդյունքների ամփոփում և համապատասխան արձանագրությունների և եզրակացությունների կազմում).

Ապահովել բաժնի մասնագետների մասնակցությունը՝ մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ նախկինում համայնքների վարչական սահմաններից դուրս, մարզերի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման նպատակով կազմված է և մարզպետարան ներկայացված հողաշինարարական գործերի ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխանության ուսումնասիրության, հողատարածքների տեղազննման և

համապատասխան եզրակացությունների տրամադրման աշխատանքներին:

Ապահովել բաժնի մասնագետների մասնակցությունը՝ մարզպետարան ներկայացված գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու վերաբերյալ մարզի համայնքներից ստացված նյութերի ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգի» համապատասխանության ուսումնասիրության և համապատասխան եզրակացությունների կազմման աշխատանքներին:

Կազմակերպել գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու մարզային հանձնաժողովի գործունեությունը (հանձնաժողովի անդամներին հողաշինարական գործերի նախնական ծանոթացում, հանձնաժողովի նիստի օրակարգի նախագծի կազմում, հանձնաժողովի անդամներին հրավիրվող նիստերին մասնակցության ապահովում, քննարկման արդյունքների ամփոփում և համապատասխան արձանագրությունների և եզրակացությունների կազմում)։

Ապահովել բաժնի խնդիրներից բխող այլ իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, փաստաթղթերի նախապատրաստման, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակման աշխատանքները: Կատարված աշխատանքների վերաբերյալ Մարզպետին ներկայացնել գրությունների նախագծեր, զեկուցագրեր, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր:

Մարզպետարանի, ինչպես նաև համապատասխան մարմինների տարբեր ստորաբաժանումների հետ կազմակերպված՝ առաջադրված խնդիրների լուծման շուրջ աշխատանքային և մասնագիտական քննարկումների արդյունքում, ըստ անհրաժեշտության, կազմել տեղեկանքներ, առաջարկություններ, զեկուցագրեր և այլ փաստաթղթեր:

Ապահովել սահմանված ժամկետներում և կարգով գրությունների, դիմումների, բողոքների առաջարկությունների քննարկումները, ուսումնասիրությունները և պատասխան գրությունների նախագծերի, տեղեկանքների, եզրակացությունների ու համապատասխան այլ փաստաթղթերի կազմման աշխատանքները:

Համապատասխան առաջարկություններ ներկայացնել Մարզպետարանի Գլխավոր քարտուղարին, Վարչության քաղաքացիական ծառայողների բացակայության դեպքում նրանց փոխարինելու մասին:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1.	Կրթություն,	որակավորման	աստիճանը
Բարձրագույն կրթություն			
3.2.	Մասնագիտական	գիտելիքները	

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության և անտառային տնտեսության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.

(3.3 կետը փոփ. 27.02.2020թ. N:236 հրաման)

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեկարգություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

- Բանակցությունների վարում
- Փոփոխությունների կառավարում
- Կոնֆլիկտների կառավարում
- Հասարակության հետ կապերի ապահովում
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
- Ծառայությունների մատուցում
- Բողոքների բավարարում
- Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
- Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3.

Գործունեության

ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: